ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, 0023, Արշակունյաց պողոտա 7
Հեռ.՝ +374-60-474144

_____ № _____

Ձեր _____ առ _____

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի
Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների տնտեսական աճի զարգացման ցուցանիշները պայմանավորված են ժամանակակից հողային հարաբերությունների պայմաններում հողաշինարարական մի շարք հիմնահարցերի ուսումնասիրումից: Նմանատիպ հետազոտությունները պետք է նպատակամղված լինեն հողային ֆոնդի կազմակերպման և կարգավորման այնպիսի միջոցառումների մշակմանը, որոնք կնպաստեն առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Աշխատանքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ բարձրացված խնդիրների ուսումնասիրումը կատարվում է համայնքների խոշորացման պայմաններում, մի գործընթաց, որի տնտեսական, սոցիալական և բնապահպանական հետևանքները դեռևս լիարժեք չեն ուսումնասիրվել: Գաղտնիք չէ նաև, որ հողերի սեփականաշնորհումից հետո հանրապետությունում միջտնտեսային, ներտնտեսային և հատկապես տեղամասային հողաշինարարական միջոցառումները կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ խախտումներով, որի արդյունքում տարբեր պատճառներով զգալիորեն ավելացել են ոչ նպատակային օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի տարածությունները, տարբեր ենթակառուցվածքների բացակայության կամ անմխիթար վիճակում

Կադաստրի
կոմիտե

գտնվելու պատճառներով գյուղատնտեսական շրջանառությունից դուրս են մղվել արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքեր: Այսպիսի հարցադրումների պարզաբանման և ուսումնասիրման տեսանկյունից ներկայացված ատենախոսական աշխատանքի թեման և բովանդակությունն արդիական է և բխում է հանրապետության համայնքների զարգացման ներկա պահանջներից:

Ատենախոսության գիտական դրույթները և եզրահանգումների ճշտությունը

Ատենախոսության գիտական դրույթները նպատակամղված են ուսումնասիրելու և բացահայտելու ՀՀ հողային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրները Վայոց ձորի մարզի Գլաձոր խոշորացված համայնքի օրինակով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված հողերի միավորման և խոշոր հողօգտագործողների հողաշինարարական կազմակերպման խնդիրների ուսումնասիրությանը: Հաշվի առնելով այս ուղղությամբ միջազգային պրակտիկայում արձանագրված դրական արդյունքները՝ աշխատանքում ներկայացված են հողաշինարարական այն խնդիրները, որոնց լուծման պարագայում հնարավոր է հասնել հողային պաշարների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Հիմք ընդունելով գյուղական համայնքներում գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային և արդյունավետ օգտագործման հիմնահարցերն՝ ատենախոսական աշխատանքում մշակվել են դրանց հողաշինարարության, հողերի կադաստրային գնահատման, ենթակառուցվածքների վերականգնման, տեղեկատվական տվյալների բազայի արդիականացման, հողերի քարտեզագրման և առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները: Հետազոտությունների համար ընտրված մեթոդիկան կայանում է հետևյալում. թվային տեխնոլոգիաների կիրառումը հողաշինարարության մեջ թույլ է տվել հեղինակին սահմանել գյուղատնտեսական հողատեսքերի օպտիմալ կառուցվածքը, GIS միջավայրում կատարել, Գլաձոր համայնքի պայմաններում, հողային և ջրային ռեսուրսների քարտեզագրում և այն կիրառել հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման կազմակերպման ոլորտում: Ատենախոսության եզրահանգումների բովանդակությունը լիովին համապատասխանում է գիտական հիմնադրույթներին, դրանք ստացվել են ճշգրիտ մեթոդիկայով հետազոտությունների կատարման արդյունքում, արժանահավատ են և կասկած չեն հարուցում:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այն բխում է աշխատանքի նպատակից, ձևակերպված և լուծված խնդիրների բովանդակությունից: Ելնելով Վայոց ձորի մարզի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացման,

Կադաստրի
կոմիտե

տարածքների հողաշինարարական կազմակերպման արդյունքների գնահատումից՝ հիմնավորվել է գյուղատնտեսական ցանքատարածքների կառուցվածքը, ի լրումն ընդունելով բնակչության կողմից հիմնական պարենամթերքների նկատմամբ գործող նորմատիվային պահանջը: Անասնաբուծության զարգացման հեռանկարներից ելնելով մշակվել է արոտների արդյունավետ օգտագործման հողաշինարարական մի շարք միջոցառումներ՝ հաշվի առնելով գյուղատնտեսական կենդանիների կողմից արոտային տարածքի, արոտային կերի, արոտակերի սննդարարության և արոտի բերքատվության ցուցանիշները: Կատարվել է հետազոտվող օբյեկտի համար հողակադաստրային քարտեզագրական հիմքերի անճշտությունների բացահայտում, և մշակվել է դրանց վերացման և ճշգրտման աշխատաքների կատարման բովանդակությունը: ArcGIS միջավայրում ստացվել են Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի գյուղատնտեսական հողատեսքերի թվային քարտեզները, ստեղծվել է համայնքի հողային ֆոնդի հաշվառման, գնահատման ու վերլուծության տարածական տվյալների բազան, և վերը նշվածից՝ հիմնավորվել է Գլաձոր համայնքի (Գլաձոր, Գետափ, Վերնաշեն) գյուղատնտեսական ցանքատարածքների օպտիմալ կառուցվածքը և մակերեսը: Բացահայտվել են Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի, բնակլիմայական պայմանների համար, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիները և ներկայացվել են համայնքապետարանին՝ ներդրումային ծրագրերի մշակման նպատակով: Հետազոտության եզրակացությունները և գիտական նորույթը ստացվել է հողաշինարարության ոլորտում կիրառվող հայտնի և ժամանակակից մեթոդներով, իսկ արդյունքները հիմնավորված են դաշտային, լաբորատոր և տեսական հիմնավորումներով:

Ատենախոսության գնահատականը

Ատենախոսական աշխատանքը շարադրված է 141 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, 112 անուն գրականության ցանկից, հավելվածներից, ներառում է թվով 21 աղյուսակ և 43 նկար: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 8 գիտական հոդվածներում, կատարված են 8 եզրակացություններ, և արտադրությանը՝ 4 առաջարկություններ: Հոդվածները հրատարակված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված գիտական տեղեկագրերում և միջազգային գիտաժողովածուներում: Արդյունքները զեկուցվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ամենամյա միջազգային գիտաժողովներում, Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովում, ինչպես նաև տարբեր միջազգային գիտական սեմինարներում: Սեղմագրի բովանդակությունը արտացոլում է ատենախոսության գիտական

Կադասպրի
կոմիտե

հիմնական դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները: Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական արդյունքները՝ այնուամենայնիվ աշխատանքում առկա են թերություններ, որոնք ներկայացված են հետևյալ դիտողություններում.

1. Աշխատանքում բավարար չի լուսաբանված այն հիմնական ուղիները, որոնք նախատեսվում են համայնքի հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման համար և, հատկապես, ցանկալի կլիներ ներկայացվեր, թե որ ենթակառուցվածքները պետք է առաջնահերթ զարգացնել բնակավայրերում, որպեսզի այն նպաստի համայնքի տնտեսական ցուցանիշների բարձրացմանը,
2. Էջ 36-ում ներկայացված Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը ներկայացնող գծապատկերում չափողականությունը ճիշտ չէ ներկայացված,
3. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են հողային ֆոնդի կառուցվածքի փոփոխության արդյունքները խոշորացումից առաջ և հետո Գլաձոր համայնքի օրինակով, սակայն լիարժեք չի պարզաբանված այդ փոփոխությունները ի վերջո որ գործոնների հետևանքն են,
4. Քանի որ ատենախոսական աշխատանքում ապահովված է բազմաթիվ հարցերի հանրագումար՝ արդյոք կատարված առաջարկությունները ներկայացվել են համայնքի ղեկավարին, ինպես նաև ավագանիներին, և որոնք են հավանության արժանացել:
5. Այնուամենայնիվ կարծում եմ, որ կա անհրաժեշտություն անդրադարձ կատարելու նաև խոշորացված համայնքի վարչական սահմանների նկարագրությանը և ներկայացվեր առաջարկություն վերջիններիս անցկացման վերաբերյալ:

Եզրակացություն

Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում» թեմայով ատենախոսությունը համարվում է ավարտուն գիտական աշխատանք, այն իր ամբողջ բովանդակությամբ նպատակ է հետապնդում նպաստելու համայնքների սոցիալ-տնտեսական արդի խնդիրների լուծմանը: Հրատարակված գիտական աշխատանքներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության թեմայի նպատակը, բովանդակությունը, գիտական արդյունքները և եզրակացությունները:

Կարծում եմ, որ ատենախոսական աշխատանքը ամբողջովին համապատասխանում է ՀՀ-ում աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի

Կադաստրի
կոմիտե

պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Ավետիք Արմենի Ալեքսանյանը արժանի է 2.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
տեխնիկական գիտությունների թեկնածու Դ.Ա. Սողոմոնյան

տ.գ.թ. Դ.Ա. Սողոմոնյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ Կադաստրի կոմիտեի անձնակազմի կառավարման
վարչության պետ Վ. Բոյախչյան

25.08.2020 թ.